



ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՐԵՏՈՒՄՆԵՐ

Յոզնակիրվ արտայայտուած սա բառը թող խօրթ կամ անտեղի չթուի ընթերցողին, քանզի զոյտ են նոյն հրիշտակին բերեավ եղած աւետումները քրիստոնէաւթեան արշալյուսին, Առկառու Աւետարոնի տառջնի էջներին մեզի աւտոնդուած:

Երկու պարգաներուն ալ մանկան մը ծնունդն է որ կ'աւետուէր: Աշխարհ գալիք երկու երախտներուն ալ ծնունդը պիտի կատարուէր անբնուկսն ու ապշեցուցիչ պայմաններու մէջ և երկու ծնելիքներն ու պիտի ըլլային սպորտականէն վեր ու տարրեր՝ այսինքն գերրնական էակներ:

Զոյգ այս Աւետումները կատարուած են սակայն հակոռնեայ պայմաններու և պարտագաներու ներքեւ Առաջինը կը կտարուէր Երուատաղէմի նման սուրբ քաղաքին և անոր սրբազնագոյն վայրին (այդ սրբուն): Սողոմոնի տաճարին մէջ, իսկ երկրորդը՝ Նազարէթի նման անտեսուած ու արհամարհուած գիւղակի մը և անոր անշոււք մէկ յարկին ներքեւ: Առաջինը արուած էր կրօնակոն աղդեցիկ գէմքի մը՝ Զաքարիս քահանայտագետին, իսկ երկրորդը՝ համեստ ու անշշան պարմանուէի մը: Առաջին աւետիս ստացողը պատժուած էր իր թերաւաւատութեանը համար, իսկ երկրորդը՝ «Ծրչնեալ և դուի կանայս կոչուելու գերազանց պատիւին արժանացաւ:

Խոստացուած երկու մանուկներն ալ պիտի ծնէին անբնուկան պայմաններու տակ: Առաջինը պիտի ծնէր ամուլ ու տարիքաւոր կնողմէ մը, իսկ երկրորդը՝ այր չճանչած՝ զայր ոչ գիտեմ՝ գեռատի կոյսէ մը:

Նազարէթի համեստ պարմանուէին, որ մայրը պիտի ըլլար Փրկչին և անով՝ Եկեղեցոյ և բովանդակ Թրիստոնէու թեան, արժանացաւ, ըստ իր նախատեսւթեան, անհնամար սերունդներու երկրպատան պաշտելութեան: Այսունեաւ երանեացին ինձ ամենայն ազգքաւ Խոսք չունիմ ոչ ուղղափառ նորելուկ պահնուարկան հոսանքներու մասին, Սուրբ Կոյսէն զատ սրբոց բարեխօսութիւնն ալ մերով և ուրացող:

Մեր Եկեղեցին իր «Մեծացուցէ» գոհար շարականներով, Լատին Եկեղեցին իր Վարդարանով ու Մայքրիան ազօթքներով և Օրթոսաց Եկեղեցին Մեծ Պահոց Ուրբաթ երեկոններուն ատզերգած իր սքանչելի «Գոլուսանքներով», լընթաց դարուց արժանուուրապէս պանծացուցած են ու կը շարունակեն պանծացնել Մայրը Թրիստոնէական Եկեղեցին ու գերազոյն բարեխօսը քրիստոնեայ մարդկութեան: Խոլաններ իսկ յարգանք կը տածեն անոր նկատմամբ, Պուրանէն հասուած մը նուիրելով անոր:

Երկու տարիներ տառջ, կաթողիկէ Եկեղեցին մեծաշուշ հանդիսաւորութեամբ նշեց երկնազարամեակը Տիրամաօր ծննդեան: Մեզի կը մեայ հանդերձել մէր նոզիները, արժանուուրապէս նշելու համար ծննդեան երկնազարամեակը իրմէ ծնած մարդկային ցեղի փրկչին:

Գէլլրդ Ա. Ճինևկիջնեան

